«Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆ ԿԱՌԼՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Հունվարի 13-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշան հանձնեց տիար Կառլոս Պետրոսյանին՝ բարձր գնահատելով նրա ազգօգուտ և եկեղեցաշեն վաստակը:

Շքանշանի հանձնման արարողությանը բացման խոսք ասաց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիվանապետ Տ. Արշակ եպիսկոպոս Խաչատրյանը: Այնուհետև Ս. Գայանե վանքի վանահայր Տ. Մակար աբեղա Հակոբյանը ներկայացրեց տիար Պետրոսյանի կողմից Ս. Գայանե վանքի բարեկարգմանը բերած նպաստը:

Ապա «Էջ Միածինն ի Հօրէ» շարականի երգեցողության ներքո ներս բերվեց Հայրապետական Սրբատառ Կոնդակը, որն ընթերցեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարապետ Տ. Արարատ եպիսկոպոս Գալթագճյանը:

Հայրապետական Կոնդակում ի մասնավորի ասվում է. «*....Անձնապես ճանաչում ենք հավատավոր հայորդուդ և ծանոթ ենք Ձեր բարի գործերին: Հատկապես մեր երկրի անկախությունից հետո Դուք կարևոր ավանդ եք բերում Հայաստանի արդյունաբերության վերականգնմանն ու զարգացմանը և նոր աշխատատեղերի ստեղծմանը՝ արժանանալով մեր ժողովրդի սիրուն ու հարգանքին: Այսօր առիթ ունենք անդրադառնալու Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն մատուցած Ձեր ծառայություններին, որ արտահայտությունն են առ Աստված Ձեր անկեղծ հավատի: Դուք սիրով հանձն առաք Սուրբ Գայանե վանքի բարեզարդման և ջեռուցման համակարգի տեղադրման հովանավորությունը՝ հավերժացնելով Ձեր անունը որպես վաղ միջնադարյան այդ շքեղակառույց վանքի բարերար:*

Գոհունակություն է Մեզ համար, որ զորավոր է մեր ժողովրդի զավակների նախանձախնդրությունը հնագույն մեր սրբավայրերի պահպանության նկատմամբ, որոնք դարեր շարունակ աստվածային օրհնություն են սփռում նվիրական մեր հողին: Ձեր գործերը բարի օրինակ են մեր ժողովրդի զավակաց համար իրենց արդար վաստակը ծառայեցնելու ի նպաստ եկեղեցաշեն ու հայրենաշեն՝ «գրոյ յիշատակի արժանի» գործերի (տե՛ս «Էջմիածին», 2007, Զ-Է, էջ 18):

Կոնդակի ընթերցումից հետո Նորին Սրբությունը մեծարյալի կուրծքը զարդարեց Հայ Առաքելական Եկեղեցու բարձրագույն՝ «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով:

Շքանշանի հանձնումից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսին շնորհակալական խոսքով դիմեց պրն Պետրոսյանը՝ ընդգծելով, որ Վեհափառ Հայրապետի կողմից հանձնված շքանշանն իր համար աշխարհում բարձրագույն պարգևն է, և արտահայտեց Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցուն մշտապես ծառայելու իր պատրաստակամությունը:

Արարողությունը եզրափակվեց Ամենայն Հայոց Հայրապետի օրհնության խոսքով: Վեհափառ Հայրապետը, անդրադառնալով մեծարյալի՝ առ Հայրենին ու մեր Սուրբ Եկեղեցին բերած ծառայություններին, գոհունակություն հայտնեց, որ առիթը ներկայացավ գնահատանք հայտնելու տիար Կառլոս Պետրոսյանին՝ նրա վաստակի հանդեպ: «*Ձեր կուրծքը զարդարում է պարգևը մի հաստատության, որ երկու հազար տարվա պատմություն ունի, որ երկու հազար տարի քայլում է մեր ժողովրդի հետ, առաջնորդում է մեր ժողովրդին և մեր ժողովրդի ինքնության լավագույն արժեքները, լավագույն ավանդները ոչ միայն կրում է, պահպանում, այլ նաև ծնում և արարում: Եվ այդ պարգևն այսօր ներկայացնում է և՛ գնահատականը մեր հայրերի, որոնք երկու հազար տարի տքնել են ի սեր Քրիստոսի և ի սեր մեր Եկեղեցու, իրենց կյանքն են զոհաբերել մեր Եկեղեցու պայծառության ու շինության համար, և՛ գնահատականը գալիք սերնդի: Եկող սերունդն էլ պիտի օրհնությամբ հիշի այսօրվա բարերարներին ու նվիրատուներին, որոնց աշխատանքի ազնիվ վաստակով շեն ու պայծառ է պահպանվում Հայոց երկիրը, Հայոց Եկեղեցին, հայոց կյանքը*»,- ասաց Ամենայն Հայոց Հայրապետը՝ ընգծելով, որ գնահատվում է ոչ թե պարզապես բերված ավանդի նյութական արժեքը, այլ նվիրումի ոգին՝ մեր Եկեղեցուն, մեր ժողովրդին, մեր Հայրենիքին:

Հանդիսությունը փակվեց Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ» աղոթքով:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ภาพสมเด็จพระญาณสังวร สกลมหาสังฆปริณายก